

ՀՈՒՍԵՊՈՍ ՓԼԱՎԻՈՍԸ ՄՈՒՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՂԱՅՈՒՐ

Ժ. Գ. ԷԼՁԻՐԵԿՅԱՆ

Մովսես խորենացին «Հայոց պատմությունը»¹ շարադրելիս, ի թիվս անտիկ մի շարք հեղինակների, օգտագործել է նաև հրեա մատենագիր Հովսեպոս Փլավիոսի աշխատությունները²։ Պատմիչը հանվանե հիշատակում է Հովսեպոսին, գրելով. «որպէս ասէ Յովսեպոս» (Ա, ԻԴ), «որում վկայէ Յովսեպոս» (Ի, ԻԶ), «վկայէ այսմ բանիս և Յովսեպոս» (Բ, ԺԵ)։

Պատմագրության մեջ բազմիցս շոշափվել է Փլավիոսի և խորենացու առնչությունների հարցը³ և այն այսօր որևէ կասկածի ենթակա չէ։ Ուսումնասիրողները Հովսեպոսին նշում են որպես խորենացու «Հայոց պատմության» Տիգրան—Արտավազ թագավորների ժամանակաշրջանի, մասամբ նաև հետագա ժամանակաշրջանի պատմության առանձին հատվածների աղբյուր։ Սակայն չեն նշում, թե խորենացին Հովսեպոսի որ աշխատությունն է օգտագործել։ Նրանց կարծիքով խորենացին առհասարակ օգտագործել է և՛ «Հրեական պատերազմի մասինը», և՛ «Հրեական հնախոսությունը»։ Հայագետ Կարիերր ուշադրության կենտրոնում ունենալով միայն Աբգար թագավորի պատմությունը (Աբգարի զրույցը Մովսես խորենացու «Հայոց պատմության» մեջ) նկատել է, որ «Հրեական հնախոսությունը» «Հայոց պատմության» անմիջական սկզբնաղբյուրը չէ։

Գ. Խալաթյանը, համոզված լինելով, որ Մովսես խորենացին օգտագործել է նաև Հովսեպոսի «Հրեական հնախոսությունը» և հատկապես ուշադրություն դարձնելով խորենացու «Հայոց պատմության» էջերում շարադրված Տիգրանի պատմությանը, կարծիք է հայտնել խորենացու կողմից Հովսեպոսի տվյալների կամայական օգտագործման մասին։ Նա հատկապես նշում է, որ Տիգրանի թագավորության առաջին տասնամյակների պատմությունը⁴ փաստո-

¹ Մովսէսի խորենացու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913։

² Иосиф Флавий, Иудейская война, СПб., 1900 (այսուհետև В. Ј.), նույնի, Иудейские древности, СПб., 1900 (այսուհետև А. Ј.)։

³ Г. А. Халатьян, Армянские Аршакиды в истории Армении Монсея Хоренского, М., 1903, ч. II; А. Gutschmid, Klein Schriften, Leipzig, 1892, H. O. Эмиль, История Армении Монсея Хоренского, М., 1893 (ծանոթագրություններ), Կարիեր, Աբգարի զրույցը Մովսես խորենացու «Հայոց պատմության» մեջ, Վիեննա, 1897 (հայերեն թարգմանությունը), Զ. Մանսդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1945, Գ. Սարգսյան, Տիգրան Բ-ի և Արտավազ Բ-ի զահատարիների քանակը ըստ խորենացու (ՀՍՍՀ ԳԱ «Արաբեր», 1967, № 12), նույնի՝ «Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես խորենացու մոտ» («Բանբեր մատենադարանի», 1956, № 3), Ս. Կրկյաշարյան. Հովսեպոս Փլավիոսը հայերի և Հայաստանի մասին (անտիպ)։

⁴ Հովսեպոս Տիգրան Բ-ին առաջին անգամ հիշատակում է մ. թ. ա. 76—69 թթ. դեպքերի կապակցությամբ, երբ վերջինս զբաղված էր սիրիական նվաճումներով։ խորենացին հենց այս

րեն բացակայում է հորենացու մոտ, Հովսեպոսի մի շարք տվյալներ հորենացին կամայական փոփոխության է ենթարկել. տարրեր ժամանակներում ապարած և Արևելք ժամանած հոռմեական մի շարք զորավարներ, որոնք եկել են սիրիական դործերը կարգավորելու և համարյա ոչ մի առնչություն չեն ունեցել Հայաստանի հետ, դարձել են Տիգրանի ժամանակակիցները: Մյուս կողմից, նա ավելացնում է, որ բոլոր հոռմեական զորավարներին, որոնք իսկապես Տիգրանի ժամանակակիցներն են և առնչվել են նրա հետ, հորենացին նշում է հպանցիկ (օրինակ Պոմպեոսին), իսկ Սուլլայի և Լուկուլլոսի մասին լռում է առհասարակ. պարզ է, որ հայ պատմիչը խուսափում է խոսել Լուկուլլոսի մասին, իսկ Միհրդատի մահից հետո նա աշխատում է Պոմպեոսին հեռացնել Արևելքից⁵ և այլն:

Կարծիք է հայտնվել նաև, որ հորենացին չգիտեր Հովսեպոսի հունարեն բնագրի գոյության մասին, այլ դրան ծանոթ էր ասորերենից կատարված հայերեն թարգմանությամբ: Կարիերը գրում է. «Մ. հորենացին Հովսեպոսի աշխատությունները դիտի միայն ասորերեն թարգմանության վրայից կատարված հայերեն թարգմանությունից»⁶:

Գ. Ջարբհանալյանը ոչինչ չի հայտնում Հովսեպոսի աշխատությունների վերաբերյալ: Հայկական ձեռագրացուցակներում նույնպես հիշատակություն չկա Հովսեպոսի աշխատությունների հայերեն թարգմանությունների մասին: Հովսեպոսի աշխատությունների հայերեն ընդօրինակությունները ուշ շրջանի են, թարգմանված լատիներենից⁷:

«Հայոց պատմության» Տիգրան—Արտավազգ բաժինը (Բ, ԺԴ—ԻԳ), ինչպես նաև հաջորդ՝ Արշամ—Արգար (Բ, ԻԴ—ԻԶ) թագավորների պատմությունը շարադրելիս հորենացին առատորեն օգտագործել է Հովսեպոսի վկայությունները, ըստ որում «Հրեական պատերազմի մասին» աշխատության առանձին հատվածներ բերված են գրեթե բառացի: Հովսեպոսի «Հրեական պատերազմի» և Մովսես հորենացու «Հայոց պատմության» ու «Հրեական հնախոսության» համապատասխան մասերի համադրությունից պարզվում է, որ հորենացին ծանոթ էր միայն «Հրեական պատերազմի մասին» աշխատությանը և չգիտեր «Հրեական հնախոսությունը», որտեղ պատմական կարևոր նշանակություն ու-

նվական էլ համարում է Տիգրան Բ-ի զահակալության սկիզբ, և շարադրում է Տիգրանի պատմությունը՝ հետևելով Հովսեպոսին: Վերջին հիշատակությունը Տիգրանի մասին Հովսեպոսի աշխատությունում առնչվում է Պոմպեոսի հետ՝ մ. թ. ա. 66—64 թթ. դեպքերի կապակցությամբ: Տիգրանի մահվան և նրա որդի Արտավազգ Բ-ի զահակալության մասին մ. թ. ա. 55 թ. Հովսեպոսը լռում է, բնականաբար, այն անհայտ է նաև հորենացուն: Հետագա քաղաքական իրադրությունը նկարագրելիս հորենացին քաղաքական թատերաբեմում Տիգրանին հիշատակում է մինչև մ. թ. ա. 30—37 թթ.: Այս պատճառով էլ առաջանում է ժամանակագրական այն խախտումը, որի մասին ակնարկում է հայաթյանցը (Գ. Խ. Սարգսյան, Տիգրան Բ-ի և Արտավազգ Բ-ի զահատարիների քանակը ըստ հորենացու):

5 Դ. Халатьян, նշվ. աշխ., էջ 61, 64, հմտ. Gutschmid, նշվ. աշխ., էջ 289:

6 Կարիեր, նշվ. աշխ., էջ 40:

7 Գ. Ջարբհանալյան, Հայկական թարգմանությունը նախնյաց (Դ—ԺԳ դդ.), Վենետիկ, 1859:

8 Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Հովսեպոսի գործերի լոր՝ ձեռագրեր՝ № 1489, 1728, 1729, 1909 («Պատմութիւն պատերազմին հրէից») XVII—XVIII դդ. թարգմանություններ են, երկու ձեռագրեր՝ № 2720, 2847 («Հնութիւնք հրէից») XIX դ. Պահպանվել են նաև այլ ձեռագիր ժողովածուներ (№ № 737, 1960, 1992, 3964, 6590, 9860), ուր կան Հովսեպոսի առանձին աշխատություններից հատվածներ:

նեղող միևնույն իրադարձությունները մեկնաբանված են այլ երանգավորումներով, քան «Հրեական պատերազմում» և առկա են որոշ լրացումներ: Ուստի, Խորենացին ծանոթ չլինելով Հովսեփոսի «Հրեական հնախոսությունը», բնականաբար, չէր կարող այնտեղ հիշատակված իրադարձությունները նկարագրել: Եվ Խալաթյանցի նշած թերությունների մեծ մասը Խորենացու մոտ առաջացել է այս պատճառով:

Համադրենք Հովսեփոսի «Հրեական պատերազմի» և Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և ապա «Հրեական հնախոսության» համապատասխան հատվածները, որտեղից ավելի պարզ կերևա, որ Խորենացու սկզբնաղբյուրը միայն «Հրեական պատերազմի մասին» աշխատությունն է: Համեմատությունները սկսենք Խալաթյանցի հիշատակած հռոմեական զորավարների մասին հաղորդումներից և տեսնենք, թե ինչու Խորենացին չի հիշատակում Սուլլային և Լուկուլլոսին, իսկ Պոմպեոսին անդրադառնում է թռուցիկ:

Սուլլայի մասին. Սուլլայի անունը «Հրեական պատերազմում» ոչ մի անգամ չի հիշատակվում, Խորենացին այս զորավարի մասին ոչինչ չգիտի: «Հրեական հնախոսությունը» նրա անունը հիշատակում է 2 անգամ (Ա. Յ., XIV, 4,4, 8,2) Միհրդատ Եվպատորի և Լուկուլլոսի կապակցությամբ:

Լուկուլլոսի մասին

«Հրեական պատերազմի մասին»

«Իսկ Ալեքսանդրան զորք ուղարկեց Դամասկոս (առիթն այն էր, որ Պղտոլոմեոսը⁹ անդադար ճնշում էր քաղաքը) և վերացրեց այն առանց որևէ դժվարության, իսկ հայոց թագավոր Տիգրանին, որը պաշարել էր Պտղոմայիս քաղաքը և այնտեղ գտնվող Կլեոպատրային, դաշինքներով ու նվերներով հեռացրեց: Բայց անհանգստացած տանը սկսված ավերածությունների պատճառով, որ առաջացել էր Լուկուլլոսի արշավանքների հետևանքով, Տիգրանը վերացնում է պաշարումը և հեռանում Հայաստան:» (I, 5, 3):

«Հայոց պատմություն»

«Եւ նոյն հետայն դիմէ յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պտղոմայիզ Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց: Առեալ գերի բաղում և ի Հրէից՝ նստի շուքջ զՊտղոմայիզ քաղաքաւ: Իսկ զշխոյն Հրէից Աղեքսանդրիայ, որ և Մեսադիինայ, որ էր լեալ կին Աղեքսանդրի, որդւոյ Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչս բազումս տալով՝ զարձոյց զնա անտի: Քանզի էր լուեալ և համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յեղուզակ խռովէր զերկիրն Հայոց...» (Բ, ԺԴ):

Այս նույն դեպքերը Հովսեփոսի «Հրեական հնախոսությունում» շարադրված են հետևյալ կերպ.

«Հրեական հնախոսություն». «Այդ ժամանակ էլ լուր ստացվեց, որ թագավոր Տիգրանը 300 հազար զորքով ներխուժել է Սիրիա և պատրաստվում է մտնել Հրեաստան: Այս բնականաբար ահաբեկեց թագուհուն և ժողովրդին: Այդ պատճառով, երբ նա դեռևս պաշարում էր Պտղոմայիսը, նրա մոտ ուղար-

⁹ Պտղոմեոսը Կլեո-Սիրիայի թագավորության տիրակալն էր մ. թ. ա. 80—40 թթ., որը Հրեաստանի դեմ պայքարելիս, հավանաբար, դաշնակցում էր Տիգրան Բ-ի հետ (ժ. էլ լ ի բ ե կ-յ ա ն, Ասորիքը հայկական տերության կազմում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1970, № 6, էջ 65):

կեցին պատվիրակություն բազում արժանավայել ընծաներով: Որովհետև Սե-
լենե¹⁰ թագուհին, որը կոչվում էր նաև Կլեոպատրա, այդ ժամանակ տիրում էր
Սիրիային և հորդորել էր բնակիչներին՝ դռները փակել Տիգրանի առջև: Ուստի,
պատվիրակները հանդիպելով նրան, խնդրում էին բարենպաստ պայմաններ
շնորհել թագուհուն ու ժողովրդին, իսկ նա (Տիգրանը) գնահատելով նրանց
այդքան հեռվից ժամանելը՝ լավագույնս հուսադրեց: Բայց հազիվ էր Պտղո-
մայիսը գրավել, երբ լուր հասավ Տիգրանին, թե Լուկոլլոսը հետապնդելով
Միհրդատին, չի կարողացել նրան բռնել, քանի որ վերջինս փախել է Իբերիա
երկիրը, և Լուկոլլոսը ասպատակելով Հայաստանը՝ պաշարել է (մայրաքաղա-
քը) Տիգրանն այս մասին իմանալով վերադարձավ իր սեփական երկիրը»
(XIII, 16, 4):

Ի՞նչ էական տարբերություններ կան այս հատվածներում: «Հրեական հնա-
խոսությունը» դեպքերը նկարագրում է ավելի մանրամասն և լայն պլանով.
Տիգրանը գրավել է Պտղոմայիս քաղաքը, այս մասին՝ առհասարակ «Հրեա-
կան պատերազմը» լուր է: «Հրեական հնախոսությունը» հիշատակում է, որ
Լուկոլլոսը Արևելքում հետապնդել է Միհրդատ Եվպատորին և չի կարողացել
նրան բռնել (փաստորեն հիշատակում է Միհրդատյան III պատերազմը, որ
տեղի էր ունենում Հռոմի և Պոնտոսի միջև մ. թ. ա. 73—70 թթ.): Այնուհետև
Լուկոլլոսը ասպատակելով Հայաստանը, պաշարել է մայրաքաղաքը (նկատի
ունի Տիգրանակերտը): Տիգրանը այս մասին իմանալով, վերադարձել է իր
սեփական երկիրը: Սրանք են այն լրացումները, որ առկա են «Հնախոսու-
թյունում» և չկան «Հրեական պատերազմում»:

«Հրեական պատերազմում», որից օգտվել է Խորենացին, Լուկոլլոսի անու-
նը հիշատակվում է մեկ անգամ, որը հեշտությամբ կարող էր վրիպել ուշա-
դրությունից կամ մոռացվել: Ի տարբերություն սրա, «Հրեական հնախոսու-
թյան» մեջ Լուկոլլոսի անվանը հանդիպում ենք մի քանի անգամ: Այս դեպ-
քում Խորենացին հենվել է Լուկոլլոսի մասին պահպանված ժողովրդական
ավանդության վրա¹¹, «Վայկուն ոմն յեղուզակ խռովէր զերկիրն հայոց...»:

Պտմպեոսի մասին. «Հրեական պատերազմը» Պտմպեոսին հիշատակում է
հրեական գործերի առնչությամբ: Խորենացին Պտմպեոսի մասին տեղեկու-
թյունները քաղել է այս աշխատության հետևյալ հատվածից՝ վերաշարադրե-
լով այն յուրովի.

«Հրեական պատերազմի մասին»

«Հայոց պատմություն»

«(Սկսվորոսը)... Հայաստանից ու-
ղարկվել էր Սիրիա Պտմպեոս Մեծի
կողմից, որն այդ ժամանակ պաաե-

«Յայնմ ժամանակի Պտմպեոս Հռո-
մայեցւոց զօրավար զօրօք բազմօք ե-
կեալ հասեալ ի Միջերկրեայս՝ զՍկաւ-

¹⁰ Սելենեն Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս Ֆիսկոնի դուստրն էր, որ առաջին անգամ ա-
մուսնացել էր Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս VIII Լաթյուրոսի հետ, այնուհետև Սելեկյան թա-
գավորներ՝ Անտիոքոս VIII Գրյուպոսի, Անտիոքոս IX Կիդիկացու, Անտիոքոս X Եվսեբիոսի
հետ: Այս Սելենե-Կլեոպատրան Տիգրանի դեմ ընդմիջումներով պայքարել է 13 տարի: Հետագա-
յում նա գերվեց Տիգրանի կողմից և սպանվեց Սելեկիա բերդում:

¹¹ Հ. Մանանդյանը անդրադառնալով Խալաթյանցի այն ենթադրությանը, թե իբր Խորենացին
կամայականորեն է Լուկոլլոսին դարձրել Վայկուն յեղուզակ (Халатянц, նշվ. աշխ., էջ
64 և 375), համարում է անհավանական: Ըստ Մանանդյանի այդ վկայությունը հիմնված է ժո-
ղովրդական ավանդության վրա (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 179, ժան. 2):

րաղմում էր Տիգրանի դեմ: Հասնելով Դամասկոս, որը դեռ նոր էր նվաճվել Մետելլոսի և Լուիոսի կողմից, վերջիններից վերջրեց իշխանությունը և տեղեկանալով Հրեաստանում տիրող դրության մասին շտապեց այնտեղ» (I, 6, 1—4):

րոս սպարապետ իւր յԱսորիս առաքէ՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ... քանզի էր դարձեալ յիւր աշխարհն վասըն խուճապանաց յեղուզակին: Անցեալ Սկարոսի ի Դամասկոս, և տեսեալ զքաղաքն առեալ ի Մետեղայ և ի Ղուղայ՝ զնոսա հալածեալ անտի, ինքն ի Հրէաստան փութայր հասանել ի վերայ Արիստաբուղի, յօգնականութիւն եղբօր նորա երիցու, Հիւրկանու քահանայապետի, որդւոյ Աղեքսանդրի» (Բ, ԺԵ):

Ինչպես տեսնում ենք «Հրեական պատերազմը» հիշատակում է, որ Սկավրոսը Հայաստանից է գալիս Ասորիք, մինչդեռ Խորենացին օտարել է Հայաստան բառը: Նա ուղղակի գրում է, որ Սկավրոսը Ասորիք էր եկել պատերազմելու Տիգրանի դեմ, բայց որովհետև Տիգրանը վերադարձել էր Հայաստան ավազակի հարուցած խուճապի պատճառով (նկատի ունի Լուկուլլոս-Վայկունին), ապա նրանք չեն հանդիպում: Եվ քանի որ Խորենացին ծանոթ չէր «Հնախոսությունը», բնականաբար, լռում է նաև Պոմպեոսի՝ Հայաստանում գտնվելու մասին, որը մեզ հայտնի է «Հնախոսությունից»։ «Այդ ժամանակ Պոմպեոսը Սիրիա ուղարկեց Սկավրոսին, որովհետև ինքը գտնվելով Հայաստանում, դեռևս պատերազմում էր Տիգրանի դեմ» (Ա. Յ., XIV, 2,3):

Միհրդատ Եվպատորի մահվան մասին Խորենացու հաղորդման հիմքում նույնպես ընկած է միայն «Հրեական պատերազմի» վկայությունը:

«Հրեական պատերազմի մասին»

«Պոմպեոսը» ուղղակի հետապնդում էր նրան, ժամանակ չտալով ռազմական պատրաստությունների և նրա եռանդը առավել ուժեղացրեց Միհրդատի մահվան լուրը, որ ինքը ստացավ Երիթրոսում գտնված ժամանակ: (I, 6,6):

«Հայոց պատմություն»,

«Եւ ի ձեռն հօրն Պիղատոսի Պոնտացւոյ զՄիհրդատ սպանանէ թունաւոր դեղովք: Վկայէ այսմ բանիս և Յովսէպոս ի ճառին, որ վասն ապրսամին պատմէ, այսպէս ասելով. «Պոմպէի հուպ յԵրիթրով հասանեն աւետիք մահուանն Միհրդատայ»: (Բ, ԺԵ):

Այս դեպքերի մասին «Հրեական հնախոսությունը» գրում է. «...որոշ ժամանակ անց, երբ Պոմպեոսը արդեն ճանապարհին էր, պատրաստվելով նրա դեմ պայքարել, Պոնտոսից ուղարկված մարդիկ հաղորդեցին Միհրդատի մահվան լուրը, որը վրա էր հասել նրա սեփական որդու՝ Փառնակի ձեռքով» (Ա. Յ., XIV, 3,4): Ինչպես տեսնում ենք, «Հնախոսությունը» հայտնում է Միհրդատին սպանողի անունը: Այժմ ինչպե՞ս բացատրել, ինչո՞ւ Խորենացին մի կողմ թողնելով Փառնակին, Միհրդատի մահը¹² վերագրում է Պոնտացի Պիղատոսի հորը, որի աղբյուրը կամ հիմքը մեզ մնում է անհայտ:

¹² Միհրդատ Եվպատորի մահվան հանգամանքները իրականում այսպիսին են. Մ. Բ. ա. 63 թ., երբ Եվպատորը ռազմական պատրաստություն էր տեսել նոր հարված հասցնելու Հռոմին.

Մ. թ. ա. 40 թ. պարթևների արշավանքը Ասորիք ու Պաղեստին պարթևական զորավար Բարզափառնայի գլխավորությամբ վկայում են շատ անտիկ պատմիչներ. ինչպես, օրինակ, Դիոն Կասսիոսը (XLVIII, 25), Հուստինոսը (XLII, 4, 7), Պլուտարքոսը (Ant., 28) և վերջապես Հովսեպոսը։ Այս պատմիչների վկայություններում առհասարակ գործող անձիք պարթևներն են, այնտեղ ամենևին չեն հիշատակվում հայերը և Հայաստանը։ Մ. հորենացին այս արշավանքը վերագրում է Տիգրանին, որն այն իրագործել է պարթևական թագավոր Արշեղի հետ՝ հայ նախարար Բարզափառնայի Ռշտունու գլխավորությամբ (Բ, ԺԹ)։ Այս հատվածը ևս շարադրելիս հորենացին քայլ առ քայլ հետևում է Հովսեպոսին (B. J., I, 13, 1—10), կատարելով էական փոփոխություններ։

Կոնկրետ շեղումներին ու փոփոխություններին անդրադառնալը տվյալ դեպքում մեր նպատակից դուրս է¹³։

Պարթևական սատրապ Բարզափառնայի արշավանքը Երուսաղեմ ավարտվում է հրեական քահանայապետ Հյուրկանոսի գերեվարությամբ. «...Պարթևները Երուսաղեմում Անտիգոնոսին նստեցրին գահի վրա, մինչդեռ Հյուրկանոսին շղթայակապ գերի տարան «Պարթյունեն» երկիրը (B. J., I, 13, 10)։ Այս նախադասությամբ «Հրեական պատերազմում» առհասարակ ավարտվում են Հյուրկանոսի գերեվարության. նկարագրությունն ու պատմությունը։

Հորենացին նույնպես, այս կետից սկսած, հետևում է իր հիմնական աղբյուրից՝ «Հրեական պատերազմից», իսկ Հյուրկանոսի հետագա ճակատագրի մասին տեղեկություններ արդեն ստանում ենք «Հնախոսությունից»։ Ըստ «Հրեական հնախոսության» Հյուրկանոսը տարվում է Պարթևստան, որտեղ Փրաատես (Հրահատ) թագավորը նրա հետ վարվում է մեղմությամբ և հարգանքով «... (նա) նրան ազատ արձակեց կապանքներից և թույլ տվեց հաստատվել Բաբելոնում, որտեղ մեծ թվով հրեաներ էին ապրում։ Նրանք Հյուրկանոսին մեծարում էին որպես քահանայապետի և թագավորի։ Նույնը մինչև նփրատ բնակվող ամբողջ հրեական ազգը» (A. J., XV, 2, 2)։ Հնախոսությունը, այնուհետև, պատմում է, որ Հյուրկանոսը լսելով Հերովդեսի կողմից թագավորական իշխանության զրավման լուրը, ցանկանում է վերադառնալ Հրեաստան։ Պարթևական թագավոր Հրահատը ընդառաջելով նաև Հերովդեսի նամակ-խնդրանքին և Հյուրկանոսի ցանկությանը, ազատ է արձակում նրան և վերջինս վերադառնում է Հրեաստան։

Մովսես հորենացին Հյուրկանոսի ազատագրումը ներկայացնում է այլ հանգամանքներում։ Նա պատմում է, որ Տիգրանի եղբայր Արշամի ժամանակ, հայ նախարարներից Ենանոսը¹⁴, որ թագակապ ասպետ էր, ազատ է արձակում Հյուրկանոսին, որպես փրկագին 100 քանքար ոսկի ստանալու պայմա-

հանկարծակի նրա դեմ բռնկվում է տարերային ապստամբություն, որին մասնակցում էր անգամ նրա որդի Փառնակը։ Ծերացած Միհրդատը այլ ելք չգտնելով իր կյանքին վեր է տալիս ինքնասպանությամբ։

¹³ Շեղումների մասին տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես հորենացու մոտ։

¹⁴ Ենանոս անվանը հանդիպում ենք Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունում» (Բ, ԻԳ), ըստ որում Ենանոսը «Αναγός անունից է, որ ասորերեն բառի տառադարձության սխալ ձայնանիշով ընթերցելու արդյունք է (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 120)։

նույն Հետագայում Ենանոսը իր այդ արարքի համար պատժվում է։ Այս հատվածում ևս ոչ մի նույնություն չկա «Հրեական հնախոսություն» հետ։ Խորենացին «Հայոց պատմությունում» հետևելով բոլորովին այլ սկզբնաղբյուրների, փաստորեն Հյուրկանոսի ազատագրումը կապում է հայերի հետ, որի ակունքները, հավանաբար, պետք է փնտրել հայկական իրականության մեջ։ Այս առիթով Փափստոս Բուղանդն, օրինակ, ասում է. «Զայս ամենայն բազմութիւն հրէից, զոր գերեցին տառան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զբահանյապետն Դէից զՀիւրկանոս զառաջին ժամանակաւ։ Եւ էա՛ մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յիւրում դարոնն ի ժամանակին» (ՄԵ)։ Ուրեմն Փ. Բուղանդի ժամանակ Հայաստանում դոյութիւն է ունեցել Հյուրկանոսի՝ հայերի կողմից գերվելու մասին ավանդութիւն, որից օգտվել է Խորենացին։

Արտավազդի գերեվարումով (մ. թ. ա. 34 թ.) փաստորեն սպառվում են Հովսեփոսի վկայությունները հայոց թագավորների մասին «Հրեական պատերազմում»։ Խորենացին, այնուհետև, կտրուկ շրջադարձ կատարելով, հետևում է իր ձեռքի տակ եղած հայոց թագավորների պատրաստի ցուցակին, որտեղ հանդես է գալիս Արշամ—Աբգար—Մանատրուկ եռյակը։ Նա գրում է. «Ի քսաներորդի ամի, ի կատարումն աւուրց թագաւորութեանն Արշէզի, ժողովեալ ոօրը Հայոց՝ հրամանաւ նորին թագավորեցոցին ի վերայ ինքեանց զԱրշամ, և Արշամ, որդի Արտաշիսի, եղբօր Տիգրանայ, հայր Աբգարու Զսահմանք յԱսորւոց կոչեցին Մանուկայ...» (Բ, ԻԴ)։

Պատմագրության մեջ վաղուց արդեն հերքվել է Արշամի գոյության փաստը և պարզվել, որ այդ անունը բնագրային սխալ ընթերցման արդյունք է¹⁵։ Այս կետում Խորենացուն մեծապես կօգնեի «Հրեական հնախոսությունը», որտեղ հիշատակվում են Արտավազդի հաջորդները՝ նրա անդրանիկ որդի Արտաշեսը, ապա վերջինիս կրտսեր եղբայր Տիգրանը. «Իսկ Անտոնիոսը, նվաճելով Հայաստանը, Տիգրանի որդի Արտաբազին ('Αρταβάζης) իր որդիների և սատրապների հետ շղթայված ուղարկում է Եգիպտոս, նվիրելով նրանց վտարեցին նրան և գահի վրա հաստատեցին Տիգրանին»¹⁶։ Նրա կրտսեր եղբոր հափշտակել էր այնտեղ։ Իսկ Հայաստանում թագավորում է Արտաքսիասը ('Αρταξίας), նրա անդրանիկ որդին, որ նախապես հասցրել էր փրկվել փախչելով։ Ժամանակի ընթացքում, սակայն, Արքելայոսը և Կեսար ներոնը վտարեցին նրան և գահի վրա հաստատեցին Տիգրանին¹⁶։ Նրա կրտսեր եղբորը (A. J., XV, 4,3)։

¹⁵ Աբգարի՝ Հիսուսին գրած թուղթը (ասորական բնագիր) սկսվում է. «Աբգար Ուքամա, առ Յիսուս՝ բժիշկ բարի»։ Այս Ուքամա (Ukkama) բառը և՛ ասորական, և՛ արամեական գավառաբաբառներում գործածվում է սև նշանակությամբ։ Սևը Աբգարի մակդիրն է։ Խորենացին «Եկեղեցական պատմության» մեջ կարդացել է նաև «Աբգար Արշամայ իշխան աշխարհիս»։ Այսպիսով, Աբգարի սև մակդիրից ստացվել է հատուկ անուն՝ Արշամ, «Աբգար Արշամայ»—«Արշամի որդի Աբգար»։

¹⁶ Մ. թ. ա. 20 թ. Օգոստոսի հրամանով Տիգրիտոս Կլավդիոս ներոնը մեծ զորքով մտավ Հայաստան և թագավոր Հեռնազրեց Տիգրան Գ-ին, վերջինիս եղբորը։ Այս մասին վկայում են անտիկ շատ պատմիչներ ևս. այսպես, օրինակ, Cas., Dio, LIV, 34—35; Tac., Annales II, 3; Svetonius Tiberius, IX, 1; Strab., XVII, 1, 54։

Նույն պատճառով հորենացուն անհայտ են մնում նաև հաջորդ հայ թագավորներից՝ Երվանդ V և Տիգրան VI, որոնց անդրադառնում է «Հնախոսությունը»։ «Ալեքսանդրը, Հերովդես թագավորի որդին, ...ունեցավ երկու որդի՝ Ալեքսանդրին և Տիգրանին՝ Կապադովկիայի Արքեպոլիս թագավորի աղջկանից՝ Վերջինս, որ թագավորում է Հայաստանում, անգամակ մեռավ... իսկ Ալեքսանդրը ունեցավ... որդի Տիգրանին, որը հետագայում ներոնի կողմից ուղարկվեց որպես Հայաստանի թագավոր, սա (Տիգրանը) ունեցավ Ալեքսանդր անունով որդի, որը ամուսնացավ Կոմմագենեի Անտիոքոս թագավորի Յոտապե դստեր հետ և Վեսպասիանոսը նրան հաստատեց Կիլիկիայում գտնվող Կեստիսի թագավոր» (A. J., XVIII, 5,4)։ Չենք խոսում արդեն այն մասին, որ «Հրեական հնախոսությունը» (A. J., XVIII, 2,4) ի լրումն վերոհիշյալի, տալիս է մի մանրամասն պատմություն պարթևական թագավոր Փրատես (Հրահատ) IV որդի՝ Վոնոնի պարթևական, ապա նաև հայկական դահին տիրելու մասին (մ. թ. 11—16 թթ.)։

Մովսես հորենացու «Հայոց պատմության» հաջորդ գլուխներում (Արշամ և Արգար թագավորների հատվածներում) դեռևս հանդիպում ենք Հովսեպոսի «Հրեական պատերազմի» հաղորդած վկայություններին։ Նույնությունը¹⁷ հատկապես ակնառու է Արշամ թագավորի հատվածում (Բ, ԻԵ), այն տարբերությամբ, որ «Հրեական պատերազմում» խոսվում է միայն Հերովդես թագավորի բարենորոգչական աշխատանքների մասին և այնտեղ ոչ մի անգամ չի հիշատակվում, ինչպես ասացինք, ենթադրյալ Արշամ թագավորի անունը։

«Հայոց պատմության» Բ, ԻԶ գլխի առանցքը Հերովդես թագավորի եղբոր որդու պարթևների կողմից սպանվելու փաստն է։ Այստեղ նույնպես հորենացին հետևում է միայն «Հրեական պատերազմի» վկայություններին։ «Հրեական պատերազմում» հիշատակված Հերովդեսի եղբոր որդին իսկապես Հովսեփն է¹⁸, որն ամուսնացած էր Հերովդեսի դուստր Օլիմպիայի հետ։ Վերջինս Հերովդեսի սամարացի կնոջ՝ Մաղթակիի դուստրն էր (Հերովդեսն ուներ 9 կին։ B. J. I, 28, 4)։ Բայց իրականում պարթևների կողմից սպանված Հերովդեսի եղբոր որդին՝ Փասայեն էր (A. J., XVI, 7, 3, XVIII, 5,4), որի մասին հորենացուն ոչինչ հայտնի չէ։ Այս Փասայենը նույնպես Հերովդեսի եղբոր որդին էր և միաժամանակ փեսան։ Միայն թե վերջինս ամուսնացած էր Հերովդեսի՝ Մալամե անունով կնոջից ծնված դստեր՝ Սալամիսիայի հետ։

Այսպիսով, «Հայոց պատմության» և «Հրեական պատերազմի» առնչությունների խնդիրը, բերված փաստերի օգնությամբ, բնութագրելի է իբրև ուղղակի կապ. այն է՝ «Հրեական պատերազմը» հորենացու համար ծառայել է որպես անմիջական սկզբնաղբյուր։ Գալով հորենացու «Հայոց պատմության» և Հովսեպոսի «Հրեական հնախոսության» առնչություններին, խոսք կարող է լինել միայն միջնորդավորված կապի մասին։

Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն» և «Քրոնիկոն» աշխատությունները¹⁹ հենց այն միջնորդ կապն են, որոնցից օգտվել է հորենացին։ Բերենք մի քանի օրինակներ.

¹⁷ «Հրեական պատերազմի» համապատասխան հատվածները տե՛ս B. J. I, 21: I, 21.11; I, 24.2; XX, 4.

¹⁸ Տե՛ս I, 13,4; I, 20,4; I, 21,11, I, 24,2 օ ἀδελφεὸς αὐτοῦ Ἰωσήφ (I, 28,4).

¹⁹ Եվսեբիոսի Կեսարացու Պատմություն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, նույնի ժամանակականք երկմասնեայ (այսուհետև՝ Քրոնիկոն), Վենետիկ, 1818.

«Քրոնիկոն»

«Հրէից ազգապետ զԱրքեղաւոս զորդի Հերոդի, Աւգոստոս կացուցանէ»։ (Հ. Բ. 260)։

«Հայոց պատմություն» Բ. ԻԶ

«Հրէից ազգապետ զԱրքեղայոս նորին որդի Աւգոստոս կացուցանէ»։ (Բ. ԻԶ)։

Ինչպես տեսնում ենք, այս երկու հատվածների նմանությունը գրեթե բառացի է։ Ավելացնենք նաև, որ ըստ «Հրեական հնախոսության» Արքելայոսին ոչ թե Օգոստոսն է նշանակել, այլ նա դարձել է Հերովդեսի հաջորդը՝ ըստ կտակի, այնտեղ ամենևին Օգոստոսի անունը չի հիշատակվում։ Այս վերջինն արդեն «Քրոնիկոնի» հավելումն է։ Բերենք «Հնախոսության» համապատասխան հատվածը. «Հերովդեսը փոխեց իր սկզբնական որոշումը և նորից վերափոխեց կտակը ... Արքելայոսին նա հայտարարեց իր հաջորդը...» (Ա. Ե., XVII, 8, 1)։ «... Այնուհետև Պտղոմեոսը, որին վստահված էր արքայական կնիքով մատանին, կարգաց կտակը, որն իմիջիպալոց օրինական ուժ ստացավ կայսրի վավերացումից հետո։ Կտակի ընթերցումից անմիջապես հետո հնչեցին բարձրաձայն կանչեր ի պատիվ թագավոր Արքելայոսի» (Ա. Ե., XVII, 8, 2)։

«Եկեղեցական պատմություն»

«... Վասն ժպրհութեան համարձակութեան նորա ի վերայ Քրիստոսի...»։ (Ա. է)։

«Հայոց պատմություն»

«Պէսպէս ցաւոց զնա ըմբռնեալ,— վասն զի ի Քրիստոս համարձակեցաւ...»։ (Բ. ԻԶ)։

Դեռևս Ն. Էմինը²⁰ «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանության մեջ նկատել է, որ «Հնախոսությունը» Հերովդեսի մահվան հանգամանքները բոլորովին այլ կերպ է նկարագրում։ Նա չի նկատել, որ Խորենացու աղբյուրը «Եկեղեցական պատմությունն» է և ոչ «Հնախոսությունը»։

Հովսեփոսի «Հրեական հնախոսության» 18-րդ գրքում կարդում ենք. «Այդ ժամանակներում ապառաժ Արաբիայի թագավոր Արեւոն և տերտարարքոսը գտնվեցին միմյանց հետ հետևյալ պատճառով. Հերովդեսն արդեն վաղուց ամուսնացած էր Արեւոյի դստեր հետ։ Դեպի Հռոմ կատարած մի ճանապարհորդության ժամանակ նա անցավ իր խորթ եղբոր Հերովդեսի մոտ, որը ծնվել էր քրմապետ Սիմոնի աղջկանից։ Սիրահարվելով եղբոր կնոջը, Հերովդեսի աղջիկն (որն իրենց ընդհանուր եղբոր Արիստոբուլոսի և քրոջ՝ Ագրիպաս Մեծի աղջիկն էր), նա համարձակվեց նրան առաջարկել ամուսնանալ իր հետ։ Հերովդեսի հան համաձայնեց և պայմանավորվեց նրա տուն մտնել, երբ նա վերադառնա Հռոմից։ Ընդ որում պայմանավորվել էին, որ Հերովդեսը կվճարի Արեւոյի աղջկան, դրանից հետո նա մեկնեց Հռոմ... Երբ Հռոմում հարկ եղածը կարգավորելով, պատրաստվում էր տուն վերադառնալ, նրա կինը, որն առանց ամուսնու գիտության հասցրել էր իմանալ Հերովդեսի հետ նրա պայմանավորվածության մասին, թույլտվություն էր խնդրում մեկնելու Մաքերոն, որը գտնվում էր ճիշտ Արեւոյի և Հերովդեսի տիրույթների սահմանին... Հերովդեսը չինքնագրելով, որ կնոջը որեւէ բան հայտնի է, համաձայնեց»։

«Հորը նա պատմեց Հերովդեսի մտադրության մասին։ Արեւոն դրա հիման վրա որոշեց պատերազմ սկսել իր փեսայի դեմ հենց Գամալիտեսի սահմանների վրա։ Զորքեր հավաքելով 2 կողմերը մտան ճակատամարտի մեջ, ընդ որում Արեւոյի և Հերովդեսի փոխարեն կռվում էին նրանց զորահրամանա-

²⁰ Н. О. Эминь, История Армении Моисея Хоренского, 1893, т. 2, 202։

տարները: Այդտեղ տեղի ունեցած ճակատամարտում Հերովդեսի ամբողջ զորքը ոչնչացավ... Հերովդեսն այս բոլորի մասին գրեց Տիրերիոսին: Կայսրը զայրացավ Արեւտի վարվելակերպի վրա, Վիտելիոսին հրաման ուղարկեց պատերազմ հայտարարել նրան և Արեւտին ողջ-ողջ շղթայակապ ներկայացնել իրեն, կամ ուղարկել նրա գլուխը: (Ա. Յ., XVIII, 5, 1):

«Այդպիսի հրաման Տիրերիոսը ուղարկեց Ասորիքի փոխարքային: Հրեաներից ոմանք, իմիջիպալոց, Հերովդեսի զորքի ոչնչացման մեջ տեսնում էին Աստծո արդար պատիժը Հովհաննեսի սպանության համար: Հերովդեսը սպանել էր այդ արդար մարդուն, որը համոզում էր հրեաներին առաքինի կյանք վարել, միմյանց նկատմամբ արդարամիտ լինել, բարեպաշտ զգացումներ տածել մշտնջենավորի նկատմամբ և հավաքվել լվացման համար: (Ա. Յ., XVIII, 5, 2):

«Հնախոսության» այս պատմությունն իր արտացոլումն է գտել նաև Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունում», որտեղ, բնականաբար, առաջին պլանն է մղված ոչ թե Հերովդեսի և Արեւտի միջև տեղի ունեցած պատերազմը, այլ Հովհաննես Մկրտչի մահը:

Մովսես Խորենացին անդրադառնալով այս պատերազմի մանրամասներին (Բ, ԻԹ), գրում է, որ հայոց Արգար թագավորը գործակցելով պատրիարքի՝ Ների Արեւո թագավորի հետ, օգնում է նրան ջարդելու Հերովդեսի զորքը: Գուտշմիդը²¹ և Խալաթյանցը²² այն կարծիքին են, որ Խորենացին այս պատերազմի պատմությունը քաղել է «Հնախոսությունից»: Սրանց հակառակ, Կարիերը²³ իրավացիորեն նկատել է, որ «Հայոց պատմության» այս հատվածի հիմքում ընկած է Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունը»՝ յուրովի խմբագրված: Համադրենք համապատասխան հատվածները.

«Եկեղեցական պատմություն»

«Բայց պատմ է և Յովսէպոս և յանուանէ յիշէ զՀերովդէիադայ, և զի էր նա կին եղբօր նորա Եւէա զնա Հերովդէս ի կնութիւն իւր. և անարգեաց նա զառաջինն զոր առեալ էր ըստ օրինաց. և էր նա զուստր Արեւտայ արքայի պատրիարքուց: Իսկ զՀերովդէիադայ մեկնեաց յառնէ իւրմէ կենդանւոյն, զի վասն նորա Եսպան նա զՅովհաննէս. Եւ եղև պատերազմ ընդ նա և ընդ Արեւտ արքայ՝ վասն անարգանաց զըստեան իւրոյ. զի ի նմին պատերազմի իրրև սաստկացաւ մարտն, և արան սատակեցան առ Եսաւրակ զօրքն Հերովդէի, այս ինչ անցք անցին ընդ նա վասն շարաշար նենգութեանն զոր գործեաց նա ընդ Յովհաննէս»: (Ա, Ժ):

«Հայոց պատմություն»

«...Քանզի նախ զգուստրն Արեւտայ արքայի կին առեալ Հերովդէի, և ապա անարգեալ ի բաց եթող, և զՀերովդէիադայ մեկնեալ յառնէ իւրմէ եհան կենդանւոյն, յաղագս որոյ ...Եսպան զՅովհաննէս Մկրտիչ, Եւ եղև պատերազմ ընդ նա և ընդ Արեւտ վասն անարգանաց զըստեան. յորում սաստկապէս և արեալ սատակեցան զօրքն Հերովդէի յօգնականութենէ քաջացն Հայոց, որպէս յաստոսածային իմն տեսչութենէ, վրէժս հատուցանել ընդ մահուանն. Յովհաննէս Մկրտչին»: (Բ, ԻԹ):

²¹ Gutschmid, նշվ. աշխ., մասն Բ, էջ 26:

²² Халатъянц, նշվ. աշխ., էջ 310.

²³ Կարիեր, նշվ. աշխ., էջ 73:

Բառերի և նախադասությունների նմանություններն ակնառու են և չենք տարակուսում, որ հորենացին օգտվել է Եվսեբիոսից: Ասենք նաև, որ Եվսեբիոսի տեքստը ավելի հարազատ է Հովսեփոսի «Հնախոսություն» քան հորենացու տեքստը, որտեղ Հովհաննես Մկրտչի մահվան նոր հանգամանք է առաջարկվում:

Մ. հորենացին «Հայոց պատմության» ին գլխում պատմում է, որ հայոց թագավոր Սանատրուկը զորքով գնում է պայքարելու Արգարի որդիների դեմ, ամբողջ թագավորությանը տիրելու նպատակով: Քաղաքի բնակչությունը պատգամավորություն է ուղարկում Սանատրուկի մոտ խնդրելով չդիպչել ներքին քրիստոնեական հավատին, վերջիններս իրենց հերթին պարտավորվում են հանձնել քաղաքն ու թագավորական գանձերը: Սանատրուկը համաձայնում է, բայց հետո դժոժում է իր խոսքը. Արգարի տան բոլոր արու զավակներին կոտորում է, իսկ աղջիկներին հեռացնում Հաշտյանք՝ այնտեղ բնակվելու: Արգարի կանանցից գլխավորին՝ Հեղինենին, ուղարկում է բնակվելու հառանում: հորենացին Արգարի կնոջը անվանում է Հեղինե, «Տիկին Միջագետաց»: Արգարի պատմության միակ և լավագույն աղբյուրը՝ Ղեբուբենայի «Արգարի թուղթը» Արգարի կնոջն անվանում է Շղամաթ²⁴, Ինչպե՞ս է այս թուղթմացությունը առաջացել հորենացու մոտ: Պատասխանը հետևյալն է. հորենացին Հեղինենի պատմությունը շարադրելիս օգտվել է Եվսեբիոսի վերը նշված աշխատությունից և նույնությամբ կրկնել է «Եկեղեցական պատմության» սխալը: Բանն այն է, որ «Եկեղեցական պատմության» Բ, ԺԲ գլխում Հեղինեն անվանված է «Տիկին Միջագետաց», հունարեն բնագրում (վերնագրում) Հեղինեն կոչվում է «Թագուհի Ոսրոյենաց», իսկ տեքստում՝ «Թագուհի Ադիարենաց»: Եթե հորենացին օգտված լիներ Հովսեփոսի «Հրեական հնախոսությունից», ապա նա թույլ չէր տա հիշյալ սխալը: Այնտեղ մի ամբողջ գլուխ է նվիրված Հեղինենին, որն իսկապես Կլավդիոսի ժամանակակիցն էր և Ադիարենենի թագուհին: Այս Հեղինեն Ադիարենենի Մոնոբազ թագավորի կինն էր և Իզատես թագավորի մայրը (A. J., XX, 2, 6): «Եկեղեցական պատմությունը» օգտագործել է միայն 44 թ. սովի պատմությունը. հորենացին հետևելով Եվսեբիոսին ուրիշ բան չի ավելացրել: Մեր ասածը համոզիչ դարձնելու համար համարենք այդ հատվածները.

«Եկեղեցական պատմություն»

«Հեղինե... թագաւորեալ էր ի Միջագետս... (Բ, ԺԲ):

Յաւուրս նորա (Կլավդեայ) եղև սովն ի վերայ երկրի: ...Որպես և պատմեաց Ղուկաս ի գործս առաքելոցն և ասաց վասն Ադայի²⁵ մարգարէի, որ մարգարեացաւ նա վասն սովոյն, որ լինելոց էր առ յապայ (Բ, Ը):

Սով մեծ դիպեցաւ լինել ի Հրէաստանի, զի ի նմա Հեղինե տիկինն

«Հայոց Պատմություն»

«...Սապէս և զգլուխ կանանցն Արգարու, որում անուն էր Հեղինե, առաքեաց յիւրային քաղաքն բնակել ի հառան, թողլով նմա զտիկնութիւնն ամենայն Միջագետաց, փոխանակ բարեացն զոր գտեալ էր ի ձեռն նորայ Արգարէ:

Այս Հեղինե զարդարեալ հաւատովք, որպէս և զայր իւր ղԱրգար, ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտիցն, այլ

²⁴ Ղեբուբենայի, Թուղթ Արգարու թագաւորի առ Քրիստոս, Երուսաղեմ, 1868, էջ 10, 17, 30:

²⁵ Ադայի փոխարեն պետք է լինի Ագարոս: Այս մարգարեի անունը աղավաղված է: Միևրաբեր 5—6

գնեաց ցորեան յնգիպտոսէ՝ բաղում
 ոսկւոյ, եւ բաշխեաց ամենայնի որ մի-
 անգամ կարօտեալ էին անդ... Զի սո-
 րին իսկ այսր Հեղինեայ՝ զորմէ յիշա-
 տակեաց այս օրինակագիր (Յովսէ-
 պոս) մինչև յայսօր ժամանակի շիրիմք
 նշանաւորք կան սորա առաջի դրանն
 Երուսաղեմի²⁶։ (Բ, ԺԲ)։

չոգաւ յԵրուսաղէմ յաւուրս Կղադեայ
 ի սովին՝ զոր մարգարէացան Ագարոս.
 և տուեալ զամենայն գանձս իւր յնգիպ-
 տոս՝ գնեաց ցորեան բաղում յոյժ և
 բաշխեաց ամենայն կարօտելոց. որում
 և վկայէ Յովսէպոս, որոյ և շիրիմ
 նշանաւոր կայ առաջի դրանն յԵրուսա-
 ղէմ մինչև ցայսօր ժամանակի։
 (Բ. ԼԵ)։

Ամփոփելով ասեմք, որ Մովսեսը հորինեցին «Հայոց պատմութեան» հա-
 մար օգտագործել է Հովսէպոսի Փլավիոսի «Հրեական պատերազմի մասին» աշ-
 խատութիւնը։ «Հրեական հնախոսութեան» առանձին վկայութիւններ այդ աշ-
 խատութիւնն են անցել Եսթրէկյան Կեսարացու «Եկեղեցական պատմութեան»
 և «Քրոնիկոնի» միջոցով։

ИОСИФ ФЛАВИЙ КАК ИСТОЧНИК «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

Ж. Г. ЭЛЧИБЕКЯН

Резюме

Излагая историю периода царствования Тиграна — Артавазда в «Истории Армении», Мовсес Хоренаци преимущественно использовал труды Иосифа Флавия. Сопоставление текстов «Истории Армении» и трудов Флавия «Иудейская война» и «Иудейские древности» приводит к выводу о том, что «Иудейская война» явилась непосредственным источником «Истории Армении» Хоренаци, а «Иудейские древности» непосредственно не использованы Хоренаци: некоторые сведения из них перешли в «Историю Армении» через «Историю церкви» и «Хронику» Евсевия Кесарийского.

քանի իշ հետո այն դարձել է Ադամ. Եւ Ադամ ի մարգարէից անտի որ եկեալ էին ընդ նոսա,
 մարգարէացաւ վասն սովորն որ լինելոցն էր առ յապառ։ Խորենացին ունեցել է ճիշտ ձևը՝ Ագա-
 րոս («Եկեղեցական պատմութիւն», Բ, Գ, Կ արիւր, նշվ. աշխ., էջ 105)։

²⁶ Հեղինեի գերեզմանը «գերեզման թագաւորաց» անվամբ Երուսաղեմի հյուսիսային կող-
 մում է («Journal Asiatique», 1865, հ. 6, էջ 556)։